

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

2022թ. Հունվար-  
սեպտեմբեր



## Ամփոփ նկարագիր

2022թ. երրորդ եռամսյակում ռուս-ուկրաինական պատերազմը շարունակվեց, ինչի հետևանքով Ռուսաստանի քաղաքացիների և ռուսական կապիտալի ներհուսքը չդանդաղեց: Ավելին, Ռուսաստանում մասնակի մոբիլիզացիայի հայտարարումից հետո, ակնկալում ենք, որ վերոնշյալ տեմպերի ընթացիկ միտումները կպահպանվեն մինչև 2022թ. տարեվերջ:

Հայաստանի տնտեսական ակտիվության աճողական ցուցանիշը 2022թ. հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում աճել է:

2022թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝


- արտահանումն աճել է 63.8%-ով,
- ներմուծումն աճել է 61.6%-ով,
- զբոսաշրջիկների ներհուսքն աճել է 2 անգամ,
- միջին աշխատավարձն աճել է 13.4%-ով,
- տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 14.1%-ով:

2022թ. սեպտեմբերին Հայաստանում գնաճը կազմել է 9.9%: ՀՀ կենտրոնական բանկը 2022թ. երրորդ եռամսյակում երկու անգամ բարձրացրել է տոկոսադրույքը:




# Հիմնական տնտեսական ցուցանիշներ


**Գծապատկեր 1: Տնտեսական ակտիվության ցուցանիշ**  
2022թ. հունվար-սեպտեմբեր, աճողական



**Գծապատկեր 2: Աճն ըստ ոլորտների**  
2022թ. սեպտեմբերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ




**Գծապատկեր 3: Աճն ըստ ոլորտների**  
2022թ. հունվար-սեպտեմբերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ




- Տնտեսական ակտիվության ցուցանիշն (ՏԱՑ)** աճի միտում է գրանցել 2022թ. ընթացքում՝ երեք եռամսյակներում տատանվելով 9.4-14.8%-ի սահմաններում: Երրորդ եռամսյակի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի ՏԱՑ-ը ամսական կտրվածքով աճում է՝ 2022թ. հունվար-սեպտեմբերին հասնելով 14.1% աճի: Ամբողջ ժամանակահատվածում բարձր տնտեսական աճը, հաշվի առնելով ռուսաստանցիների դեպի Հայաստան ներհոսքի և զբոսաշրջիկների ընդհանուր հոսքը, ի թիվս այլ գործոնների, կարող է պայմանավորված լինել ռուս-ուկրաինական պատերազմով:
- Արտադրություն.** Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1881.8 մլրդ. դրամ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 10.0%: 2022թ. հունվար-սեպտեմբերին արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին նպաստող հիմնական ոլորտներն են՝ մշակող արդյունաբերությունը (+19.1%) և էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը (+2.6%): Արդյունաբերության աճի վրա բացասաբար է ազդել հանքարդյունաբերության ոլորտը:
- Շինարարություն.** Շինարարության ծավալը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 300.2 մլրդ. դրամ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 14.3%: Շինարարության աճին հիմնականում նպաստել է կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության աճը (+33.5%):
- Առևտուր.** Ներքին առևտրի շրջանառության ծավալը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 3018.1 մլրդ. դրամ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 14.5%: Ներքին առևտրի աճի հիմնական պատճառներն են երրորդ եռամսյակում զբոսաշրջիկների աճը, ինչպես նաև ռուսաստանցիների ներհոսքը:
- Ծառայություն.** Ծառայությունների ծավալը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1,824.3 մլրդ. դրամ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 27.1%: 2022թ. հունվար-սեպտեմբերի ծառայությունների շրջանառության աճին նպաստող հիմնական ենթաբաժիններն են՝ ֆինանսական և ապահովագրական գործունեություն (+45.5%), տրանսպորտ (+36.7%), տեղեկատվություն և կապ

# Զբոսաշրջություն

**Գծապատկեր 4: Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ հազար մարդ**




**Գծապատկեր 5: Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկների թիվը**



- ◆ Հայաստանում 2022թ. առաջին երեք եռամսյակների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ զբոսաշրջիկների թվի կտրուկ աճ է գրանցվել:
- ◆ 2022թ. հունվար-սեպտեմբերի ընթացքում զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1239.4 հազար մարդ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 2.0 անգամ:
- ◆ Զբոսաշրջիկների թվի կտրուկ աճի մի քանի պատճառն են՝ համավարակի սահմանափակումների ավարտը, ռուս-ուկրաինական պատերազմը և հայկական սփյուռքից ներհոսքը:
- ◆ Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկները կազմել են ընդհանուր ներհոսքի 46.1%-ը:
- ◆ Ելնելով զբոսաշրջիկների թվաքանակի աճից՝ ակնկալվում է, որ տարեվերջին նախորդ տարվա համեմատ կապիտալի ներհոսքը կաճի մոտ 2.0 անգամ քանի որ կապիտալի ներհոսքը և զբոսաշրջիկների թվաքանակի ավելացումը համաչափ են Հայաստանի համար:
- ◆ Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանից զբոսաշրջիկների թիվը կտրուկ աճել է: Նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ Ռուսաստանից զբոսաշրջիկների թիվն աճել է 2.4 անգամ: Ռուսաստանցիների ներհոսքը Հայաստան անընդհատ աճում է, և հաշվի առնելով վերջին իրադարձություններն ու Ռուսաստանում մասնակի մոբիլիզացիայի հայտարարումը՝ մենք ակնկալում ենք, որ այդ աճը կշարունակվի:

# Ջրուսաշրջություն



## Ժամանումն ըստ երկրների 2022թ. հունվար-սեպտեմբեր

1239.4 հազար, +2.0 անգամ  
(2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ)

<b>ՌՈՒՍԱՍՏԱՆ</b>	570.8 հազ., +2.4 անգամ
<b>ՎՐԱՍՏԱՆ</b>	115.5 հազ., +2.8 անգամ
<b>ԻՐԱՆ</b>	90.7 հազ., +31.5%
<b>ԱՄՆ</b>	41.6 հազ., +68.8%
<b>ՖՐԱՆՍԻԱ</b>	19.2 հազ., +81.1%
<b>ԳԵՐՄԱՆԻԱ</b>	19.1 հազ., +2.4 անգամ
<b>ԲԵԼԱՌՈՒՍ</b>	13.2 հազ., +2.6 անգամ
<b>ՀԴՆԿԱՍՏԱՆ</b>	11.9 հազ., -22.9%
<b>ՈՒԿՐԱԻՆԱ</b>	13 հազ., -17.2%
<b>ՂԱԶԱԽՍՏԱՆ</b>	8.9 հազ., +2.8 անգամ


570.8 հազար




8.9 հազար

# Միջազգային առևտուր . արտահանում

**Գծապատկեր 6: Ապրանքների արտահանում**  
2022թ. հունվար-սեպտեմբեր




**Գծապատկեր 7: Արտահանումն ըստ ապրանքների**  
2022թ. հունվար-սեպտեմբեր, մլն ԱՄՆ դոլար



- ♦ **Արտահանումը 2022թ. հունվար-սեպտեմբերին** կազմել է 3502.4 մլն. ԱՄՆ դոլար, աճելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 1366.9 մլն. ԱՄՆ դոլարով կամ 63.8%:
- ♦ Մենք ակնկալում ենք, որ արտահանումը մինչև տարեվերջ կպահպանի աճի տեմպերը, քանի որ պատերազմից հետո Ռուսաստանի պատժամիջոցները Հայաստանի համար արտահանման նոր շուկաներ են բացել:
- ♦ Հիմնական ապրանքախմբերը, որոնք նպաստել են աճին (տոկոս, 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ)`
- ♦ **Թանկ. մետաղի հանքաքար, խտանյութ`** 66.9 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 64.6 մլն. ԱՄՆ դոլարով կամ 28.9 անգամ:
- ♦ **Ալյումինե փայլաթիթեղներ<0,2մմ`** 96.3 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 10.4 մլն. ԱՄՆ դոլարով կամ 12.1%:
- ♦ **Կենդանական ծագման արտադրանք`** 113.6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 36.1 մլն. ԱՄՆ դոլարով կամ 46.5%:
- ♦ **Կենդանական ծագման արտադրանք`** 117.4 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 8.6 մլն. ԱՄՆ դոլարով կամ 7.9%:
- ♦ **Հազուստ:** 150.8 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 16.1 մլն. ԱՄՆ դոլարով կամ 12%:
- ♦ **Հեռախոս. և հեռագր. ապարատ մասեր`** 177.4 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 175.9 մլն. ԱՄՆ դոլարով or 116.8 անգամ:
- ♦ **Բուսական ծագման արտադրանք`** 178.7 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 41.0 մլն. ԱՄՆ դոլարով կամ 29.7%:
- ♦ **Երկաթամիահավածք`** 186.7 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 66.8 մլն. ԱՄՆ դոլարով կամ 55.7%:
- ♦ **Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր`** 200.1 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 41.5 մլն. ԱՄՆ դոլարով կամ 26.1%:
- ♦ **Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի`** 221 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 132.9 մլն. ԱՄՆ դոլարով կամ 2.51 անգամ:


# Միջազգային առևտուր. արտահանում

**Գծապատկեր 8: Արտահանման ծավալներն ըստ երկրների**  
2022թ. հունվար-սեպտեմբեր, մլն ԱՄՆ դոլար



- ♦ **Սիգարետ և սիգար**` 223.7 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 61.0 մլն. ԱՄՆ դոլարով կամ 37.5%:
- ♦ **Ադամանդ**` 264.0 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 195.8 մլն. ԱՄՆ դոլարով կամ 3.9 անգամ:
- ♦ **Պղնձի հաքաքար**` 511.9 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 75.3 մլն. ԱՄՆ դոլարով կամ 12.8%:
- ♦ **Արտահանման հիմնական երկրներ**`
- ♦ Ռուսաստանի մասնաբաժինը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է արտահանման ընդհանուր ծավալի 40% (1404.7 մլն. ԱՄՆ դոլար), աճելով 811.5 մլն. ԱՄՆ դոլարով կամ 2.4 անգամ 2021թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ:
- ♦ **Այլ խոշոր գործընկեր երկրներ**`


**Գծապատկեր 9: Ապրանքների արտահանումն ըստ տեխնոլոգիականության մակարդակի**  
2022թ. հունվար-սեպտեմբեր




- ♦ **ԱՄԷ**` արտահանումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 279 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 219.3 մլն. ԱՄՆ դոլարով կամ 4.7 անգամ (համեմատած այլ ամենախոշոր առևտրային 10 երկրների հետ ԱՄԷ-ի արտահանումն ամենից շատն է աճել):
- ♦ **Չինաստան**` արտահանումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 269 մլն. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 32.6 մլն. ԱՄՆ դոլարով կամ 10.8%-ով:
- ♦ **Շվեյցարիա**` արտահանումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 194.7 մլն. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 39.5 մլն. ԱՄՆ դոլարով կամ 16.8%-ով:

# Միջազգային առևտուր. ներմուծում

**Գծապատկեր 10: Ապրանքների ներմուծում 2022թ. հունվար-սեպտեմբեր, մլն ԱՄՆ դոլար**



**Գծապատկեր 11: Ներմուծումն ըստ ապրանքների 2022թ. հունվար-սեպտեմբեր, մլն ԱՄՆ դոլար**



- **Ներմուծումը 2022թ. հունվար-սեպտեմբերին** կազմել է 5797.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 2209.8 մլն. ԱՄՆ դոլարով կամ 61.6%:
- Հիմնական ապրանքախմբերը, որոնք նպաստել են աճին (տոկոսները 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ)՝
- **Քիմիայի և դրա հետ կապված արտադրանք**՝ 425.3 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 116.6 մլն. ԱՄՆ դոլարով կամ 37.8%:
- **Նավթ և նավթամթերք**՝ 422.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 174.3 մլն. ԱՄՆ դոլարով կամ 70.3%:
- **Բնական և հեղուկ գազ**՝ 401.7 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 54.7 մլն. ԱՄՆ դոլարով կամ 15.7%:
- **Պատրաստի սննդի արտադրանք**՝ 360.9 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 68.8 մլն. ԱՄՆ դոլարով կամ 23.6%:
- **Ավտոմեքենա մարդատար**՝ 337 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 260.6 մլն. ԱՄՆ դոլարով կամ 4.4 անգամ:
- **Հեռախոս. և հեռագր. ապարատ, մասեր**՝ 265.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 206.1 մլն. ԱՄՆ դոլարով կամ 4.5 անգամ:
- **Ադամանդե քար**՝ 264.4 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 187.4 մլն. ԱՄՆ դոլարով կամ 3.4 անգամ:
- **Ավտոմատ հաշվիչ մեքենաներ, բլոկներ**՝ 118.0 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 80.5 մլն. ԱՄՆ դոլարով կամ 3.1 անգամ:
- **Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի**՝ 117.0 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 51.8 մլն. ԱՄՆ դոլարով կամ 79.5%:
- **Այլումին չմշակված**՝ 81.0 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 28.9 մլն. ԱՄՆ դոլարով կամ 55.6%:
- **Ցորեն**՝ 73.9 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 41.4 մլն. ԱՄՆ դոլարով կամ 2.3 անգամ:
- **Ավտոմեքենա բեռնատար**՝ 37.7 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 19.7 մլն. ԱՄՆ դոլարով կամ 2.1%:
- **Սուրճ**՝ 31.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 13.1 մլն. ԱՄՆ դոլարով կամ 72.4%:



# Միջազգային արևտուր. ներմուծում

**Գծապատկեր 13: Ներմուծման ծավալներն ըստ երկրների**  
2022թ. հունվար-սեպտեմբեր, մլն ԱՄՆ դոլար

<b>Ռուսաստանի Դաշնություն,</b> 1,947.1	<b>Զինաստան,</b> 495.6	<b>Իրանի Իսլամական Հանրապետություն...</b> 411.8	<b>Գերմանիա,</b> 284.1		
		<b>Միացյալ Նահանգներ,</b> 271.1	<b>Իտալիա,</b> 167.3	<b>Նիդ...</b> 82.7	
	<b>Վրաստան,</b> 463.8	<b>Արաբական Միացյալ Էմիրություն...</b>	<b>Չեխիայի Հանրապետություն...</b> 72.5	<b>Իսպանիա,</b> 39.5	<b>Եվրոպական Միություն...</b> 62.6

- Ռուսաստանի մասնաբաբաժինը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է ներմուծման ընդհանուր ծավալի 33.6% (1,947.1 մլն. ԱՄՆ դոլար), աճելով 602.5 մլն. ԱՄՆ դոլարով կամ 44.8% համեմատած անցած տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:
- Այլ խոշոր գործընկեր երկրներ՝**
  - Զինաստան:** Ներմուծումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 495.6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 158.8 մլն. ԱՄՆ դոլարով կամ 47.1% համեմատած անցած տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:
  - Վարստան:** Ներմուծումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 463.8 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 228.2 մլն. ԱՄՆ դոլարով կամ 96.9% համեմատած անցած տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:
  - ԱՄՆ:** Ներմուծումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 271.1 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 189.0 մլն. ԱՄՆ դոլարով կամ 3.3 անգամ համեմատած անցած տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (համեմատած այլ ամենախոշոր առևտրային 13 երկրների հետ ԱՄՆ-ի ներմուծումն ամենից շատն է աճել):


**Աղյուսակ 1: Ներմուծումներն ըստ BEC**  
2022թ. հունվար-սեպտեմբեր

	ՆԵՐՄՈՒԾՈՒՄ		Տարեկան աճ	
	մլն ԱՄՆ դոլար	մլն ԱՄՆ դոլար		%
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5797.2</b>	<b>2209.8</b>		<b>61.6</b>
Կապիտալ ապրանքներ	886.1	329.5		59.2
Միջանկյալ ապրանքներ	2968.6	1191.5		67.0
Վերջնական սպառման ապրանքներ	1942.6	688.8		54.9
	<b>Ներմուծման կառուցվածք</b>		<b>Աճի կառուցվածք</b>	
			%	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>100.0</b>			<b>100.0</b>
Կապիտալ ապրանքներ	15.3			14.9
Միջանկյալ ապրանքներ	51.2			53.9
Վերջնական սպառման ապրանքներ	33.5			31.2

- Ապրանքների լայն տնտեսական դասակարգման (BEC) համաձայն՝ ներմուծման աճը հիմնականում պայմանավորված է միջանկյալ ապրանքների ծավալի ավելացմամբ, որոնք կազմում են ներմուծման ընդհանուր ծավալի 51.2%-ը:
- Վերջնական սպառման ապրանքների ներմուծումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1942.6 մլն. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 688.8 մլն. ԱՄՆ դոլարով կամ 54.9%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է ներքին պահանջարկի ակտիվացմամբ:
- Միջանկյալ ապրանքների ներմուծման աճի տեմպերը գերազանցում են կապիտալ և վերջնական սպառման ապրանքների ներմուծման աճի տեմպերը:
- Միջանկյալ ապրանքների ներմուծումը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 2968.6 մլն. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 1191.5 մլն. ԱՄՆ դոլարով կամ 67.0%-ով:
- Կապիտալ ապրանքների ներմուծումն 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 886.1 մլն. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 329.5 մլն. ԱՄՆ դոլարով կամ 59.2%-ով:


# Աշխատանքի շուկա. գրաղվածություն

**Ֆորմալ գրաղվածություն**  
հազ. մարդ



- Աշխատողների միջին թվաքանակը (ֆորմալ գրաղվածություն) 2022թ. սեպտեմբերին կազմել է 699.3 հազար մարդ՝ աճելով 2021թ. սեպտեմբեր ամսվա համեմատ 4.9%-ով կամ 32.7 հազարով:
- 2022թ. սեպտեմբերի դրությամբ ամենաշատ ֆորմալ գրաղվածներ գտնվում են առևտրի, կրթության և արտադրության ոլորտներում.
- ՏՏ ոլորտում 2022թ. սեպտեմբերին աշխատողների թվաքանակը կազմել է 30.9 հազար մարդ, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 41.4%-ով:
- Առողջապահության ոլորտում թվաքանակն ընկել է 2.7%-ով:
- Ամենաբարձր աճ գրանցվել է «Վարչարարական և օժանդակ գործունեություն» և «Տեղեկատվություն և կապ» ոլորտներում:
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը հանգեցրել է դեպի Հայաստան զբոսաշրջիկների/ներգաղթյալների հոսքի ավելացմանը, ինչը մեծացրել է «Կացության և հանրային սննդի կազմակերպում» ծառայությունների պահանջարկը:
- Պատերազմի պատճառով Հայաստան է ժամանել նաև աշխատուժի նոր խմբաքանակ: Սկսելով բիզնես կամ աշխատանք գտնելով Հայաստանում՝ նրանք նպաստել են բազմաթիվ ոլորտների, հատկապես ՏՏ ոլորտի աճին:

**Ֆորմալ գրաղվածություն**  
2022թ. սեպտեմբեր, հազ. մարդ




# Աշխատանքի շուկա. աշխատավարձ

## Միջինը

2022թ. սեպտեմբեր


236 հազ. դրամ, +17.4%  
(2021թ. սեպտեմբերի նկատմամբ)




- Աշխատողների միջին թվաքանակը 2022թ. սեպտեմբերին կազմել է 699.3 հազար մարդ՝ աճելով նախորդ տարվա նույն ամսվա համեմատ 4.9%-ով կամ 32.7 հազարով:  
**Որից՝**
- **Գյուղատնտեսություն՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 10,306, աճը՝ 1.2%:
- **Արդյունաբերություն՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 118,787, աճը՝ 2.2%:
- **Շինարարություն՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 27,557, աճը՝ 7.6%:
- **Մեծածախ և մանրածախ առևտուր՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 123,736, աճը՝ 7.3%:
- **Ծառայություններ՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 418,239, աճը՝ 4.9%:
- Միջին ամսական անվանական աշխատավարձը 2022թ. սեպտեմբերին կազմել է 236,742 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 17.4%-ով:  
**Որից՝**
- **Գյուղատնտեսություն՝** միջին ամսական աշխատավարձը կազմել է 139,366 դրամ, աճը՝ 7.5%:
- **Արդյունաբերություն՝** միջին ամսական աշխատավարձը Հանքագործական արդյուն. ոլորտում կազմել է 434,259 դրամ, նվազելով 1.0%-ով և միջին ամսական աշխատավարձը Մշակող արդյուն. ոլորտում կազմել է 195,168 դրամ, աճը՝ 8.7%:
- **Շինարարություն՝** միջին ամսական աշխատավարձը կազմել է 240,317 դրամ, աճը՝ 13.0%:
- **Մեծածախ և մանրածախ առևտուր՝** միջին ամսական աշխատավարձը կազմել է 167,186 դրամ, աճը՝ 13.7%:
- **Ծառայություններ՝** միջին ամսական աշխատավարձը «Տեղեկատվություն և կապ» և «Կրթություն» ոլորտներում կազմել է համապատասխանաբար 786,665 և 132,628 դրամ, աճը՝ 41.2% և 4.4%:

# Դրամական փոխանցումներ և փոխարժեք


**Գծապատկեր 17: Դրամական փոխանցումների ներհուք**  
հազար ԱՄՆ դոլար



**Գծապատկեր 18: Տրանսֆերտները և ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք**




**Գծապատկեր 19: ՀՆԱ-ի աճի կանխատեսումներ (ԱՄՆ-ի և Ռուսաստանի համար)**




- Դրամական փոխանցումների ընդհանուր ներհուքի ծավալը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 3,461.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.2 անգամ:
- Դրամական փոխանցումների մեծ մասը ստացվել է Ռուսաստանից, որին բաժին է ընկնում տրանսֆերտների մոտավորապես 67%-ը: 2022թ. հունվար-սեպտեմբերին ներհուքը կազմել է 2317,6 մլն ԱՄՆ դոլար՝ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 3.7 անգամ:
- Տրանսֆերտների 14.2%-ը կազմել է ԱՄՆ-ից կատարված փոխանցումները: 2022թ. հունվար-սեպտեմբերին այն կազմել է 492.6 մլն ԱՄՆ դոլար՝ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 18.2%-ով:
- 2022թ. հունվար-սեպտեմբերին ֆիզիկական անձանց զուտ ներհուքը կազմել է 1714.5 մլն ԱՄՆ դոլար՝ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 2.5 անգամ:
- Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով տրանսֆերտների ներհուքն ու զուտ ներհուքը զգալիորեն ավելացել են, ինչը նշանակում է, որ թեև կան շոկային գործոններ, այնուամենայնիվ, եթե բացառենք պատերազմի հետևանքները, տրանսֆերտների աճի տեմպերը չեն նվազում:
- Գծապատկեր 18-ից մենք կարող ենք տեսնել, որ տրանսֆերտները և փոխարժեքը բացասաբար են փոխկապակցված, սակայն ռուս-ուկրաինական պատերազմը հանգեցրել է նրան, որ 2022թ. առաջին եռամսյակում նրանք ունեցել են նմանատիպ պատկեր, բայց 2022թ. մայիսից հետո այն վերադարձել է իր սկզբնական փոխկապակցության:
- ԱՄՀ-ի տնտեսական կանխատեսման համաձայն՝ 2022թ. Ռուսաստանի և ԱՄՆ-ի տնտեսական աճը կկազմի համապատասխանաբար -3.4% և +1.6%, որից հետո 2023թ. կհաջորդվի -2.3% և +1.0%:
- ԱՄՆ-ի (դանդաղ) և Ռուսաստանի (բացասական) ՀՆԱ-ի աճը կարող է չազդել դեպի Հայաստան դրամական փոխանցումների ներհուքի վրա, քանի որ, չնայած տնտեսական իրավիճակին, ինչպես Ռուսաստանից, այնպես էլ ԱՄՆ-ից ներհուքի աճի տեմպերը չի դանդաղեցվել:

# Սպառողական գների ինդեքս - Հայաստան և աշխարհ

**Գծապատկեր 20: Գնաճի մակարդակ, միջին սպառողական գներ\***  
տարեկան տոկոսային փոփոխություն



**Գծապատկեր 21: Գնաճի մակարդակ, միջին սպառողական գներ**  
տարեկան տոկոսային փոփոխություն




- Ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի դեմ բազմաթիվ պատժամիջոցներ են կիրառվել: Ի պատասխան՝ Ռուսաստանը նույնպես պատժամիջոցներ սահմանեց: Այս պատժամիջոցների և պատերազմի արդյունքում COVID-19-ի հետևանքների վերականգնումը դանդաղեց, իսկ Հայաստանում և աշխարհում գնաճի տեմպերը շարունակեցին արագանալ:
- 2022թ. երրորդ եռամսյակի դրությամբ համաշխարհային գնաճը մնում է մտահոգիչ և աճող գործոն: Ընթացիկ տվյալների համաձայն՝ 2022թ. սեպտեմբերին միջին համաշխարհային գնաճը կազմում է մոտավորապես 15.9%: Սա նշանակում է, որ գրեթե բոլոր երկրները տուժել են գնաճից: Առավել գնաճ գրանցվել է Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում ու Կովկասում՝ համապատասխանաբար 24.9% և 12.6%:
- Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ Հայաստանի միջին գնաճը 2022թ. սեպտեմբերին կազմել է 9.9%:
- Հայաստանն, իր աշխարհագրական դիրքից ելնելով, չունի գնաճի այնքան բարձր ցուցանիշ, որքան հարևան երկրները: Գծապատկեր 20-ից կարելի է նկատել, որ սեպտեմբերին Տաշիկստանը տարածաշրջանում միակ երկիրն է, որն ունեցել է Հայաստանից ավելի ցածր գնաճ՝ 5.7%:
- Հայաստանի Կենտրոնական բանկը 2022թ. երրորդ եռամսյակում երկու անգամ բարձրացրել է իր տոկոսադրույքը, ինչը գնաճը կայուն պահող գործոններից մեկն է: Տոկոսադրույքը բարձրացվել է ընդհանուր 0.75 տոկոսային կետով:
- Մենք ակնկալում ենք, որ գնաճը կմեծանա, քանի որ մեր հարևան երկրների գնաճը կարող է առաջացնել գնաճային ներմուծման էֆեկտ, իսկ Ռուսաստանի դեմ պատժամիջոցները կարող են նաև հանգեցնել լրացուցիչ գնաճի:

\*Գնաճի միջին մակարդակը հաշվարկվում է տվյալների և երկրների առկայության հիման վրա  
\*\* Հյուսիսային Ամերիկայի տարածաշրջանի երկրներն են՝ ԱՄՆ, Կանադա և Մեքսիկա




# Հայաստան . սպառողական գների ինդեքս

Գծապատկեր 22: Հայաստանի ՍԳԻ-ի դինամիկան




Գծապատկեր 23: Հայաստանի գների ինդեքսների դինամիկան 2022թ., %



- Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի համաձայն՝ Հայաստանի սպառողական գների ինդեքսը 2022թ. սեպտեմբերին կազմել է 9.9%, իսկ հունվար-սեպտեմբերին՝ 8.6%:
- ՀՀ ԿԲ ավանդների, ռեպո և վերաֆինանսավորման տոկոսադրույքներն աճել են 2022թ. երրորդ եռամսյակում: Դրանք ներկայումս կազմում են համապատասխանաբար 9.0%, 12.0% և 10.5%:
- Առևտրի ծախսերի աճը հանգեցրել է նրան, որ ներմուծման գների կուտակային ինդեքսը 2022թ. սեպտեմբերին հասել է 6.7%: 2022թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում PPI-ն հասել է 4.1%, ինչն ավելի քիչ է 2022թ. հունվար-հունիսի 7.8%:
- Նման իրավիճակը կարող է բացասաբար ազդել այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, որը մեծապես կախված է վերջնական, կապիտալ և միջանկյալ ապրանքների ներմուծումից:
- Այսպիսով, հակադարձող էֆեկտը որոշ չափով անխուսափելի էր:
- Երրորդ եռամսյակում շինարարության գների ինդեքսը և արտադրողի գների ինդեքսը գրանցել են նվազման միտում: 2022թ. հունվար-սեպտեմբերին շինարարության գների ինդեքսը և արտադրողի գների ինդեքսը կազմել են համապատասխանաբար 7.2% և 4.1%, որոնք 2021թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են համապատասխանաբար 3.7 և 2.8 տոկոսային կետով:
- Հայաստանի արտահանման ինդեքսը 2022թ. հունվար-սեպտեմբերին բացասական է: Դա կարող է լինել, քանի որ տարեսկզբից Հայաստանի փոխարժեքն արժևորվել է ավելի քան 20%-ով:


# Հայաստանի սպառողական գների ինդեքս

Գծապատկեր 24: 5 Հիմնական ապրանքախմբերի կշիռները ՍԳԻ զամբյուղում



- Հայաստանի սպառողական գների ինդեքս (ՍԳԻ) զամբյուղը կազմված է տասներկու հիմնական կատեգորիաներից, որոնցից յուրաքանչյուրը կշռված է ըստ սպառողների կարիքների և առաջնահերթությունների:
- Տասներկու կատեգորիաներն են՝ 1) սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ, 2) բնակարան, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և այլ վառելիքներ, 3) առողջապահություն, 4) տրանսպորտ, 5) ալկոհոլային խմիչքներ, 6) հագուստ և կոշիկ, 7) հաղորդակցություն, 8) կահույք, կենցաղային տեխնիկա, 9) հանգիստ և մշակույթ, 10) կրթություն, 11) ռեստորաններ և հյուրանոցներ, և 12) տարբեր ապրանքներ և ծառայություններ:
- Կառուցվածքում գերակշռողը երկու հիմնական կատեգորիաներն են սննդամթերքը և տրանսպորտը:
- 2022թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում ՍԳԻ-ի վրա ամենաբարձր կշռված գնաճային ազդեցությունն ունեցել է «Սննդամթերքը»-ը: Այն կազմել է մոտավորապես 5.13%՝ կուտակային գնաճի 8.6%-ից:


Գծապատկեր 25: Սպառողական գների ինդեքսում 4 առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքախմբեր



- Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք
- Տրանսպորտ
- Սարքեր ապրանքներ և ծառայություններ
- Բնակարանային ծառայություններ
- Առողջապահություն


# Հայաստանի արտաքին պարտք և պետական բյուջե

**Գծապատկեր 26: ՀՀ պետական պարտք մլն ԱՄՆ դոլար**



- Հայաստանի ընդհանուր պարտքը 2022թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 9,931.5 մլն ԱՄՆ դոլար:
- Դրանից 6147 մլն դոլարը կազմում է արտաքին պարտքը, որը 2021թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտավորապես 7.8%-ով, մնացածը ներքին պարտքերն են, որոնք աճել են մոտ 59.5%-ով:
- Արտաքին պարտքը բաժանվում է երկու մասի՝ Հայաստանի պետական պարտք, որը կազմում է ընդհանուրի մոտ 91.3%, ինչը 2021թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 9.3%-ով, և ՀՀ կենտրոնական բանի պարտքը, որը կազմել է մոտ 8.7%, ինչը 2021թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 12.7%-ով:
- 2022թ. հունվար-սեպտեմբերին Հայաստանի բյուջեի եկամուտը կազմել է 1,500,686.6 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 24.9%-ով:

**Գծապատկեր 27: Հայաստանի բյուջեի եկամուտները և ծախսերը մլն. դրամ**



- Վերոնշյալ աճը հիմնականում պայմանավորված է հարկերի և տուրքերի եկամուտների աճով, որը կազմել է մոտ 23.6%-ով՝ հասնելով 1,405,766.3 մլն դրամի:
- 2022թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ կառավարության ծախսերն ավելացել են մոտավորապես 7.4%-ով: Պետական ծախսերը բաժանվում են ընթացիկ ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի:
- Ընթացիկ ծախսերն աճել են 4.2%-ով, որը ներառում է պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տոկոսավճարները, դրամաշնորհները և այլն:
- Ոչ ֆինանսական ակտիվներն աճել են 38.5%-ով:
- Հայաստանը 2022թ. հունվար-սեպտեմբերին ունեցել է բյուջեի հավելուրդ. Դա պայմանավորված է նրանով, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի եկամուտներն ավելին էին, քան կառավարության ծախսերը»: